«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվություն և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2011թ.

## Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՎԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ..... 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ..... 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ..... 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ..... 4

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի բաժնետերերին և ղեկավարությանը.**

Կից ներկայացվող ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը կազմվել է «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվության հիման վրա: Վերոհիշյալ ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվության պատրաստումը Ընկերության ղեկավարության պատասխանատվությունն է: Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը բոլոր էական առումներով համապատասխանում է նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությանը, որի հիման վրա այն կազմվել է:

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը, որի հիման վրա կազմվել է ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: 2013թ. հունվարի 13-ի մեր եզրակացությունում մենք դրական կարծիք ենք արտահայտել Ընկերության նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ, որի հիման վրա կազմվել է ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը բոլոր էական առումներով համապատասխանում է նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությանը, որի հիման վրա այն կազմվել է:

Ընկերության ֆինանսական վիճակի, տվյալ ժամանակահատվածում գործունեության արդյունքների և մեր անցկացրած աուդիտի շրջանակների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու համար, ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը պետք է դիտարկել այդ ամփոփված նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվությունը կազմելու համար հիմք հանդիսացած նախնական հատուկ նշանակության ֆինանսական տեղեկատվության և մեր աուդիտորական եզրակացության հետ միասին:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Դավիթ Հարությունյան
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC.

13 հունվարի 2013թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

*Այս փաստաթուղթը իրենից ներկայացնում է անգլերեն տարբերակի հայերեն թարգմանությունը:*
*Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:*

| *հազ. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբերի 2011թ. | 1 հունվար 2011թ. |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 789,508 | 618,358 |
| Ոչ նյութական ակտիվներ | 3,950 | 1,954 |
| Հիմնական միջոցների գծով կանխավճարներ | 75,184 | 3,815 |
| Շահութահարկի գծով կանխավճար | 125,383 | 86,566 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **994,025** | **710,693** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 772,252 | 581,489 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 286,827 | 273,117 |
| Բանկային ավանդների տեղաբաշխում | 212,174 | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 191,510 | 116,802 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **1,462,763** | **971,408** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **2,456,788** | **1,682,101** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Կանոնադրական կապիտալ | 1,525,190 | 1,525,190 |
| Կուտակված վնաս | (988,003) | (1,012,642) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **537,187** | **512,548** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Փոխառություններ | 119,895 | - |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **119,895** | **-** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Փոխառություններ | 50,837 | - |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 1,748,869 | 1,169,553 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **1,799,706** | **1,169,553** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **1,919,601** | **1,169,553** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **2,456,788** | **1,682,101** |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2012թ. դեկտեմբերի 14 -ին:

Հայկո Անդրեաս Կրայսել
Գլխավոր տնօրեն

Սերինե Ալեքսանյան
Ֆինանսական տնօրեն

| *հազ. ՀՀ դրամ* | **2011թ.** |
|---|---|
| Հասույթ | 4,200,250 |
| Վաճառքի ինքնարժեք | (2,977,523) |
| **Համախառն շահույթ** | **1,222,727** |
| Այլ գործառնական եկամուտ | 9,765 |
| Վաճառքի և իրացման ծախսեր | (704,825) |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (294,087) |
| Այլ գործառնական ծախսեր | (206,528) |
| **Գործառնական շահույթ** | **27,052** |
| Ֆինանսական ծախսեր | (2,413) |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | **24,639** |
| Շահութահարկի գծով ծախս | - |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ** | **24,639** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ** | **24,639** |

| *հազ. ՀՀ դրամ* | Կանոնադրական կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.** | 1,525,190 | (1,012,642) | 512,548 |
| Ընդամենը 2011թ. համապարփակ եկամուտ | - | 24,639 | 24,639 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **1,525,190** | **(988,003)** | **537,187** |

| *հազ. ՀՀ դրամ* | 2011թ. |
|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | |
| Դրամական միջոցների մուտքեր հաճախորդներից | 4,711,130 |
| Դրամական միջոցների մուտքեր այլ դեբիտորներից | 5,941 |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ | (2,216,170) |
| Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ | (641,115) |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (573,546) |
| Շահութահարկից բացի, այլ հարկեր | (1,675) |
| Ավելացված արժեքի հարկ | (730,686) |
| **Գործառնություններից ստացված դրամական միջոցներ** | **553,879** |
| Վճարված շահութահարկ | (38,817) |
| Վճարված տոկոսներ | (2,413) |
| Ստացված տոկոսներ | 3,613 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | **516,262** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | |
| Հիմնական միջոցների ձեռք բերում | (389,815) |
| Բանկային ավանդների տեղաբաշխում | (211,464) |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(601,279)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | |
| Հոսքեր փոխառություններից | 175,000 |
| Փոխառությունների մարում | (4,268) |
| **Ֆինանսական գործունեության արդյունքում ստացված զուտ դրամական միջոցներ** | **170,732** |
| Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (11,007) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | **74,708** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին | 116,802 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **191,510** |